

Փ Ո Ւ Ի Ն Ձ

Օ Ր Ա Ք Ի Ր

10 փարայ

Պօշխ բաժանորդը ընտանիքի մեկ արժանի Մեծիս պիտի լինի քանի որ 100 թու. ոչ համար, իսկ գաւ. առայ մէջ 50 քր. գարձեալ 100 թու. ոչ համար, թղթատարութեան ծախքն առաջադրուած է: — Ետեւ ժամերի ստորեկանն է միայն երկու արժանի Մեծիս, եւ հատոր 40 փրջ:

Գանուցման անոցը 40 փրջ է մեկ անգամի համար, իսկ աւելի սակարիութիւն կը չենի: Օրագրիս քերականութեան գրքի մասին պիտի լինի ու չընկալու. Տնօրէնն Կ. Պօշխ Մարտիկոս փաշա Բիւրճի իսկ քարէ շարկ թիւ 26 Բայազետի Տղարան:

Թիի 3 ՉՈՐԵՔՆԱՐԹԻ 1872 ՄԱՅԻՍ 24

ԱԶԳԱՅԻՆ

Կրեմք, թէ Ս. Պատրիարք Հայրը վերջապէս մտադիր է պաշտօնէն դադարեցունել վանայ փոխառահորդ գերապատիւ Տ. Պօղոս վարդապետը, և հեռագրով մայրաքաղաքս կանչել:

Եթէ ստոյգ են մեր ընդունած տեղեկութիւնները՝ վանայ վիճակայնոց մէջ այս պատճառաւ մեծ յուզմունք պիտի ծագի:

Չեմք կարծեր, որ կրօնական ժողովն այսպիսի որոշում մի ընէ, որովհետեւ Ս. Պատրիարք Հայրը երբ քանի մը շաբաթ յառաջ իւր գիտաւորութիւնն յայտնեց ժողովոյն, հակառակ գիտողութիւններ եղան և Պօղոս վարդապետի կանչուելուն համար որոշում չարուեստ: Ուրիշ բան է, եթէ Ս. Պատրիարք Հայրը ինքնին գործել կուզէ այս խնդրոյն մէջ ալ:

— Գէօթիակահայի հրաժարեալ Առաջնորդ Գեորգ Յ. Յովսէփ Ս. Արքեպիսկոպոս երկուշաբթի օրը խնդրագիր մատուցանելով կրօնական ժողովոյն, Պրուսա իւր տունը երթալ առանձնանալու հրահան ուղեր է:

Ժողովն չընդունելով Նորին գերապատուութեան այս խնդիրն, կանչեր ըսեր է որ իրեն առանձնանալու համար

վանք մը որոշէ, և հոն երթայ ճանապարհի ծախքը կեդրոնական սնտուկէն տրուելով: Բայց Յովսէփ Սրբազանն չընդուներ և խորհրդարանէն մեկներ է:

— Վանայ վարդապետ վանուց փոխվանահայր արժ. Տ. Մեսրոպ վարդապետ երկուշաբթի օրը մայրաքաղաքս եկաւ կրօնապետէն, ուր ուխտի զնացած էր:

Այս առթիւ պէտք է ուղղել, թէ Սիս դնացողն լիմ անապատի Միաբան Դանիէլ վարդապետն է, և ոչ Մեսրոպ վարդապետ, որոյ համար դրամ էինք շտաբթ օրը՝ ճանապարհորդի մը տուած տեղեկութեան վրայ:

— Մեր բարեկամաց ոմանք յանձնարարութիւն ըրած են մեզ հրապարակաւ շնորհակալութիւն մատուցանել Հոռմէական ազգայնոց վարդապետներէն Սիպիլեան արժ. կղեմէս, Հօր թիթեւ պարտուց կամ պակասութեանց պատճառաբանտարկեալ ազգայնոց այցելութիւն ընելուն՝ և առանց որեւէ խտրութեան միջնորդութիւն ու օգնութիւն մատուցանելուն համար:

Ամենայն հաճութեամբ կիատարեմք այս յանձնարարութիւնը, և այս առթիւ կհրաւիրեմք կղերը որ բարեհաճի Հ. Սիպիլեանի օրինակին հետեւիլ:

Հ. Սիպիլեան Ասիոյ շատ կողմերը

ճամբորդութիւն ըրած , և շատ կարեւոր տեղեկութիւններ ու հնութիւններ հաւաքած է : Մտ չէ այն հռոմէական կղերին կարգէն , որ իրենց դռնուած տեղերը մայեռանդութեամբ ատելութեան որոմն կտերմանեն մեր և բաժանեալ աղբայնոց մէջ և հետեւաբար այլեւայլ վնասուց պատճառ կլինին :

Պաղէստինի Յոյն կաթողիկ ժողովուրդը՝ մեծազէս դայթակղելով Պապին անսխալութեան նորահար վարդապետութեանը վերայ , մտերս աղերսագիրք մի յուղարկած են Նաղարէթի Յոյն Մեաբապօղիտին , աղաչելով զՆորին Սրբաշնութիւնը որ դարձեալ ընդունի զիրենք ՚ի ծոց իրենց հայրենի օրթոսօքս Ս. Եկեղեցւոյն , յորմէ դժբաղդաբար իրենց նախահարքը բաժնուեցան , կրօնն , այնպիսի պատճառաց համար , որք տեղի չունին այժմ :

Յիշեալ աղերսագրին օրինակը , որ երկար է , այս օրերս կարդացինք Աստուծոյ Ս. Երջիւ և Բրտօս կոչուած Յոյն լըրագրաց մէջ :

« Կաղաչեմք զուրբ Հոգին , որ լուսաւորած է Պաղէստինի Յոյն կաթողիկ ժողովուրդը , իւր աստուածային շնորհը պարգեւէ նաեւ մեր արեւելեան Հայ կաթողիկ եզրարց և լուսաւորէ անոնց միաքը , որպէս զի իրենք եւս օրին մէկը վերադառնան ՚ի ծոց Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյն , յորմէ դժբաղդաբար բաժնուեր են իրենց նախահարքը՝ անհիմն պատճառներով » :

Աւելոյն :

Ինդրուած է հրատարակել հետեւեալ նամակն :

... Խժրագիր .

Փոլ լրագրոյն ՅԵՂ թուոյն մէջ տեսոյ հրատարակեալ Յիլիպէն եկած անստորագիր նամակ մը իբր ի պատասխանի անդրիա-

նուսօլսեցոյ մը նամակին : Նամակագիրն դովեստներ կկարդայ Յիլիպէի Տ. Գեորգ քահանային համար , որ ընդհակառակն պարսաւանաց արժանի է վրան եղած ծանր ամբաստանութեանց պատճառաւ : Ինչպէս բերանը յառաջ կերթ այ գովել այս քահանայն , որ տեղոյն եկեղեցւոյն 40 հազար զուրու պատրաստ գանձը այլ և այլ սնտոի պատճառներ փճացուցած ըլլալու ամաստանութեան տակ կգտնուի : Յիլիպէի աղբայնոց սերն ու համակրութիւնը երբեք գրուած չէ Տ. Գեորգ քահանայն , և քանի մ'անձինք միայն՝ որոց մէջ ըլլալու է նամակագիրն ալ , նորա բարեկամ և պաշտպան են :

Նամակագիրն յիշեալ քահանային վրայ դովեստներ թափելն յետոյ , կյարձակի արժանապատիւ Տ. Աբրահամ վարդապետի վերայ , և կըրպարտէ չարաչար՝ զՆորին արժանատւութիւնը իբրեւ դազանաբարոյ մէկը վատեհամբաւելու փորձ փորձելով :

Յիլիպէ կամ Աբրիանուպօլիս իմ ծննդեան քաղաքը չէ , բայց նոյն կողմերը շատ կեցած և բաւական տեղեկութիւն ստացած եմ : Քիչ ժամանակ չէ , յորմէ հետէ կճանչնամ Տ. Աբրահամ վարդապետը՝ որ այժմ քարոզութեան պաշտօնով էյուզի եկեղեցին կգտնուի : Յիշեալ վարդապետին դէմ ամանց կողմանէ եղած անհաճոյ հրատարակութիւնք՝ զորս իմ համարմանս բոլորովն հակառակ գտայ , հետաքրքրութիւն , շարժելով Յիլիպէ բարեկամացու մէկուն դրեցի և տեղեկութիւն խնդրեցի Յիլիպէի մէջ նորա ունեցած ընթացից վրայ :

Ահաւասիկ առ իս գրուածք :

1872 Մայիս 6. Յիլիպէ .

« Մուգատտէմ Յիլիպէտէ միտաֆիր օլան « Եօլկատը Աբրահամ վարդապետի սորարսըն . օ պիշարէ ճղնաւորուն հիւանիւ հապէնի աիւ իւլ թարիֆ իտէմէմ . վէ եալընըզ պէնտէնիլ տէյիլ պուրաճա օլան ումում միլլէթ . Գաղաթէ իքի բիշինին իշերինէ սեքթէ կելտիկինտէն բահաթը պօղուլում նէ չարէ . վէ պու տտէմին հաղկընտա օլան « հէղէ յանլար քեսաֆֆէսի խիլաֆ տըր , վէ պուրատան ալալթիմտէ քէնտուսինին « հիւանիւ հալինէ պիր մաղաթմա վէրլիլը

« արք . իշտէ պու քերբէ տախի կինէ սիզի
« իսքեամ ի թմէք իշին թանրադընըզ զաթ-
« լարտան իմզա ի թտիբէրէք պիր մազպաթա
« կէօնտէրաթա » :

Ս հաւաասիկ օրինակը :

« Մուգատտէ՛ թարաֆընըդոս պուլու-
« նան Եօղտուրը Սբրահամ վարդապետ Ֆե-
« լիպէտէ պուլունտուղու միւտտէթ քէնտու
« սըֆաթը բուհանիյէ սինէ եաղըշըր հալ ու
« հարաքէթլէ վէ եկեղեցի խուսուսունտա
« տայինա միւտալէմէթ վէ իֆայի հիւնիւ
« իսքամէթ իթմիշ օլուպ ՚ հիշ պիր վէճէ իլէ
« սույի հարէթթի միւշահտէ օլունմադըր
« իլէ պերապէր ալտէթինտէ տախի քէմալի
« իաշնուտի իլէ միւլադաթ վէ միֆարիգաթ
« իթմիշ օլտուղունուղու շէհաաթէթ վէ թաս-
« տիք իաէրիլ » :

(Մարգարէ-Թէմա)

Սյս գրութիւնք , ինչպէս նաեւ ու-
րիշ գրութիւնք՝ որ անյեաշները Ս. Պատ-
րիարք Հօր ուղղուած են , տարակայո-
չեն թողուր արժանապատիւ Մատթէոս
վարդապետի Ֆիլիպէ ունեցած բարևք
ընթացից վրայ : Հետեւաբար թող ա-
մաչէ այն նամակագիրն , որ նորա հայ-
մար դաղանաբարոյութիւններ ըրած է
կրտէ և կհրատարակէ : Ուրիշ բան է ,
եթէ նամակագիրն ամաչել չգիտէր և
ձերմակին սեւ ըսելու ընութիւնն ունի :
Սակայն թող դիտնայ թէ յիշեալ հան-
րական բարի վկայութիւնք քանի որ
կան , արժ . Մատթէոս վարդապետի
պատուոյն երբէք արատ չեն բերեր չա-
րամութեամբ գրուած անուանարկիլ
գրութիւնք :

22 Մայիս 1872: Կ. Պօլիս :

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Իզմիտի երկաթուղւոյն շինութեան
համար մեծ փոյթ կայ : Կյուսացուի որ
անալիկայ յուլիս ամսոյ վերջերը կա-
ւարտի : Հայտար-փաշայէն մինչեւ թուղ-

լա եղած մասն և երթեւեկութիւնք կը
սկսին : Իսկ թուղայէն մինչեւ Իզմիտ
սեպտեմբերի վերջերը կաւարտի :

— Եղիպտոս դանուող դաղըլիացիք
116 հազար ֆրանգ հաւաքեր և Փարիզ
դրկեր են , որպէս զի գերմանացւոց
ձեռքը ի գրաւ դանուած դաղըլիական
դաւառաց անյապաղ փրկութեան հա-
մար բացուած հանգանակութեան հետ
միանայ : Գաղղիացիք ոչ միայն Եղիպ-
տոսի մէջ այլ ամեն տեղ ստակ կփոյլեն
յիշեալ հայրենասիրական նպատակաւ :
Գալտոցական աշակերտք իսկ քաջաշերտ-
թեան համար իրենց տրուելիք պար-
գեւենքը կթողուն սոյն նպատակին ծա-
ռայեցունելու համար :

— Հռոմէական ազգայնոց և Պուլ-
ղարաց խնդիրներէն յետոյ , այս օրերս
հրէից վերաբերեալ խնդիր մը ծագած
է : Ասոնք ալ երկու կուսակցութեան
բաժնուած են . մէկն՝ յառաջադիմու-
թեան բարեկամ , իսկ միւսն յետադի-
մութեան բարեկամ խախամ մը ազգա-
պետ ընտրել կուղէ :

— Կիւրակէ դիշեր ժամը չորսին ա-
տենները Սարայ-պրունի բացերը դիշե-
րապահ մակոյկին հասարակ մակոյկի մը
վրայ կասկածելով դէպ ի այն սղղուած
ատենը , վերջինը սկսեր է ընթացքը
փութացունել և ատրճանակ մ'ալ պար-
պեր է : Ասոր վրայ դիշերապահն ամե-
նայն փութով հասեր , և մէջը դանուող-
ները՝ եօթը հերլենացիք՝ կարուկապ ը-
րեր և զիրենք ու իրենց մակոյկն նա-
ւահանդատաց վերատեսչութեան յանձ-
ներ է :

— Թէրասնէի մէջ Ժամանակէ մը հե-
տէ շինուելու վրայ եղալ փայտեայ աւա-
ղանին շինութիւնն աւարտած լինելով
երկուշաբթի օրը ծովը իջուցին հանդի-
սիւ : Ներկայ էին բարձրապատիւ Եու-
սուֆ Իլզէտտին էֆէնտի , Մահմուտ ճե-
լայէտտին էֆէնտի կայսրօրդիք , բարձ-

բապատուի մեծեպարքոն, և զինուորական ու ծովային դործոց պաշտօնեայք:

Գաղղիոյ մէջ հասարակաց ուշադրութիւնը դրաւող խնդրոց մէկն ալ Մէյն գերմանացւոց յանձնող Պագէն մարաշխախին դատն է, որ զինուորական ատեանի առջեւ պիտի ելնէ: Շատերը յասամաք կիսօսին ասոր վրայ իբրեւ մատնըչի և դաւաճանի վրայ:

Միայն այս մարաշխախն չէ որ այսպէս ամենայն խստութեամբ դատի ենթարկուած է: Ուրիշ ժամանակներ ալ Կ-Յ մարաշխախք քննութեան առնուելով՝ մահուամբ պատժուեր են:

— Սպանիայէն եկած վերջին հեռագիրք կառավարութեան նպատաւոր են: Ապստամբք հեռզհեռէ հնազանդութեան կողմն և մէկ քանի դաւաճաց մէջ խաղաղութիւնը բողբոլին վերահաստատուած է:

Կառավարութեան զօրաց ընդհանուր հրամանատար Սերանօ մարաշխախին համար ամբաստանութիւն եղած էր թէ ապստամբաց նպատաւոր դաշինք ընդունած է, բայց սա անձամբ ներկայանալով պաշտօնէից ժողովոյն՝ բացատրութիւններ տուեր և իւր վրայ եղած ամբաստանութիւնը հերքեր է:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՔ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵՆԱՆ

ՆԱՐԵԿ

Պատկերազարդ, թուղթ և կազմ ընտիր (14 բունթօ տառով):

Կը ծախուի Չագմաքճըլար-Եօդուչու թիւ 10 Տէտէեանց վաճառատունը,

Գին 10 Ղուրուչ:

ԺՕԶԷՑ ՊԱԼՍԱՄՕ

ՀԵՂԻՆԱԿ

ԱՂԷՔՍՕՆՏՔ ՏՌԻՄԱ

ԹԱՐԿՄԱՆԵՑ

Կ. ԵԱԶՄԱՃԵՍՆ

Աշխարհածանօթ հեղինակին նշանաւոր դործերէն մին եղող այս հետաքրքրաշարժ վիպասանութեան հայերէն թարգմանութիւնը ութ հատորի բաժնուած՝ բաժանորդագրութեան գինն Ղուրուչ — 70. մէն մի հատորի գին կէս արծաթ մէճիտ:

Բաժանորդ գրուիլ ուզողը պէտք է դիմէ Չագմաքճըլար-Եօդուչու թիւ 10 Տէտէեանց վաճառատունը:

ՊՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԹՏԵ ՍՐԲՈՑ ՑԱԿՈՎԵՏԱՆՑ

Տպագրուած է արդեամբք բարեպաշտ Մահտեսի կիրակոյի ֆարուկեանց Ռինկեանցւոյ, յօդուտ և 'ի պայծառութիւն խառանգաւորաց վարժարանի Ս. Աթոռոյս, վայելուչ ձեւով, մաքուր թղթի վրայ և 610 երեսէ բաղկացեալ: Կը պարունակէ Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ Պատմութիւնն, իւր սկզբնաւորութենէն մինչեւ 1867 թուականն, որոյ արժանեաց և կարեւորութեան գնահատութիւնն բանիբուն ընթերցասիրաց անաչառ դատաստանին կը թողումք:

Գին 16 դահեկան:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. ԱԼԱՃՍՃԵՍՆ